

ԿԱՅ ԵՐԱԺԻՇՏ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

Ե.-ԺԵ. ԴԱՐ

Ըստ աւանդութեան, պատարադի ժամանակ Թանահատի վանքում մի հրաշք է պատահում. Ս. Ստեփանոսի տապանից մի ուժեղ ձայն է լսւում որ ասում է. «Քաղեալ լիցին քեզ մեղք քո, ոյ կին դու»: Զարմանում են ներկաները, անմիջապէս յայտնում են պոռնիկ կնոջ և բոլորն էլ գոհութիւն տալով Աստծուն ներում են նրան: Սակայն նա, հակառակ իրեն տրուած թողութեան, մնում է իր փորած դրում և այնտեղ էլ մահանում: Նրան հենց վանքի դիմաց էլ թաղում են:

Ստեփանոս Սիւնեցու մատենագրական մատակր մեծ է եղել և բազմաթանր: Կատարել է թարգմանութիւններ և գրել ինքնատեղծ երկեր, որոնք դաստիարակել են Հայ մողոմարի գաւազներին և Հարստացրել՝ մեր մատենագրութիւնը:

Սիւնեցին տքնաջան աշխատող է եղել իբր ճարտար թարգմանիչ, հմուտ երգիչ, շարականներ կարգաւորող և ստեղծագործող, աստուածաբան և ընդլսմասաց ճառագիր, քերականագէտ, լեզուագէտ և Սուրբ Գրոց ընտիր մեկնաբանող:

Նա եղել է նաեւ մեծ երաժիշտ: Նրան են մերգարւում ութ ձայների վարդապետութիւնն ու շարականների կարգաւորումը: «Ներանի ի Բարեպետի յաղագս ձայնից թէ ուստի իցեն և կամ յումմէ գտան, զոր թարգմանաց Ստեփանոս փրկիչսիսայ, զի նա եղև երաժիշտ և հմուտ ձայնից ամենայն կենդանեաց և քաղանեաց ի մասունս իԴ. որ են այսոցեի... (և սա առնոյ ի ձայնիցս) և գծէ գուգաթիւս առ ամենայն ձայնս, որ միւսմի երգեն առջօք ձայն առարեալ» (263 Եւսեփ, «Եկեղեցւոյ Պատմութիւն»)։ Ըստ Ռ. Աթայեանի կարծիքի, «Բանի որ Սիւնեցին եղել է Աթէնքում, կատարելապարծու զիտութիւնների մէջ, լատակեղեակ էր քրիստոնէական եկեղեցական

երաժշտութեան և ընդհանրապէս արարողութեան իր ժամանակի բոլոր հարցերին. ուստի պէտք է կարծել որ Հայ եկեղեցական երաժշտութեան մէջ ութ ձայնի ներդրումը այդ ընդհանուր երեսօթի դրսեւորութեան մէջն էր»։ Ստեփանոս Օրբելեանն էլ ութ ձայների կարգաւորումը վերագրում է Ս. Սիւնեցուն. «Բաժանեաց և գութն ձայնն և կարդեաց շարեաց զլատութեան օրհնութիւնն, երգեաց կցորդս քաղցրահնչիւնս, յարմարեաց զստորգոյս լինանց եօթն եղանակօք յոյժ խորհրդաւոր և զպահանջն, որ յաղուհացն երգի...»:

Այս յիշատակութիւններից պարզւում է որ Սիւնեցին եղել է ութ ձայների հեղինակը և շարականների կարգաւորողը: Նա է աւելին անդամ կոնտոր մտցրել մեր եկեղեցում: Սակայն հակառակ այս կարծիքի, պէտք է նժողրել որ Ստեփանոս Սիւնեցին ութ ձայները միայն կարգաւորել է և շարականների մէջ մտցրել «կանոն»ը: Սիւնեցուց առաջ մենք արդէն ութ ձայների վարդապետութիւնը ունէինք և տակաւին մեղծից առաջ էլ չորս ձայները Յոյների ժոռյոյութիւնն ունեցել են. ուստի ութ ձայների վարդապետութիւնը Ստեփանոս Սիւնեցի հնարեց կամ ստեղծեց չենք կարող ասել. իսկ, ըստ երեսօթին, նրա ժամանակ շարականների և ձայների մէջ անհանդուրժիւն էր մտել, իսկ Սիւնեցին, որպէս ժամանակի լուսաւոյն երաժիշտներից մէկ, կարգաւորել է ու հաստատուն հիմքերի վրայ գրել ձայները:

Ստեփանոս Սիւնեցին մեծ է նաեւ որպէս ստեղծագործող երաժիշտ: Նա գրել է բազմաթիւ շարականներ: Իրեն են պատկանում Ուստի Օրհնութիւնների Կարգը (բացառութեամբ Գ.Ղ., որը երգել է Ներսէս Շնորհալիս): Հայր Դեռնոյ Ալիշան գնահատելով Ս. Սիւնեցուն, գրում է. «Աւագ օրհնութիւնք բաւական էին միայն նա միայն ի փառս, եթէ և չէր այլ ինչ մնացեալ յեր-

կոչ նորին, այլ եւ համօրէն ազգի նորին՝ եթէ ջնջեալ բարձրեալ էր բնաւ այլ դպրութիւնս դառ։ Աւագ Օրհնութիւններէ հեղինակութեան մասին մի ուրիշ կարծիք էլ կայ, թէ Ե. Դարում ապրող Ստեփանոս Սիւնեցի Առաջինն է գրել, մինչ Սիւնեցի երկրորդը (մեր Սիւնեցին) դրանք միայն կարողաւորել է ու կանոններէ վերածել։ Սակայն այժմ Աւագ Օրհնութիւնների հեղինակ ընդունուած է Ս. Սիւնեցին։ Նա մեծ է նրանով, որ տակաւին է. Դարում, այն յիշմանում՝ երբ Հոգեւորականութիւնը հաստատուել էր եւ ինքզինք ուժեղ էր գգուն ու անարգում էր «ուսմիկ», «գումհիկ» (հեթանոսական) արուեստը, Սիւնեցին ոչ միայն յի խրատում ժողովրդական ստեղծագործութիւններէր, այլ նաեւ խրատում է որ

երբեմն-երբեմն օգտակար են ժողովրդականր եկեղեցական եղանակներէ մէջ։

Ստեփանոս Սիւնեցին է. Դարի մեր մեծագոյն երաժիշտն է. թէեւ նրա ստեղծագործութիւնների մասին տարբեր կարծիքներ կան, սակայն դա կարեւոր չէ։ Նա բազմակողմանիօրէն զարգացած, հմուտ Հոգեւորական եւ երաժիշտ է եղել, կարգաւորել է շարականները եւ «Կանոն»ը մտցրել Հայ եկեղեցուց ներս, յօրինել քաղցրաւոր շարականներ եւ կցորդներ։

Ստեփանոս Սիւնեցին որպէս սուրբ, որպէս Հոգեւորական, գրագէտ, շարականաւոր, երաժիշտ, քերականագետ-լեզուագէտ եւ թարգմանիչ, իւրաքանչիւր բնագաւառում ունի պատուաւոր տեղ։

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ

Սուրբ Ներսէս ԾնորՀալին մեր նշանաւոր կաթողիկոսներից մէկն է։ Որդին է Ապիրատ իշխանի եւ ծնուել է 1101 թուականին։ Նա իր կրթութիւնը ստացել է մեծ եղբոր՝ Գրիգորի հետ միասին, Վկայաւերի ձեռքի տակ, Շուղղի Կարմիր Վանքում։ Վկայաւերի մահից յետոյ ԾնորՀալու եւ իր եղբոր դաստիարակութիւնը յանձնուած է Բարսեղ Անեցի Կաթողիկոսին։

Կիլիկիայում ԺԲ. Դարում Հայ մշակութիւթի վառ օճախներից մէկն էր Հանգիսանում Կարմիր Վանքը։ Այստեղ դաստիարակուած էին Կիլիկեան նշանաւոր վարդապետներ, նրանց թուում Ստեփանոս Մանուկ կոչուած Հռչակաւոր վարդապետը, որին աշակերտում են նոյնիսկ Արեւելեան Հայաստանից ժամանած բազմաթիւ կրօնականներ, թաքցրած իրենց վարդապետական աստիճանը։

Կարմիր Վանքը դառնում է մի նոր վարդապետարան։ Այս Վանքի արժանաւոր շէրջանաւարտները մեր մատենագրութեան մէջ կոչուել են «Շնորհալի», ինչպէս մի ժամանակ Սիւնեաց Դպրոցի աշակերտները կոչուած էին «Բերթնաղ», իսկ Արագածոտն Դպրոցի շէրջանաւարտները՝ «Խմստատաւեր»։ Որով Ներսէսին տրուած Շնորհալի մական

որիւր, որքան արդիւնք նրա շնորհալի անձնաւորութեան, նոյնքան ալ պատկանում է նրա դպրոցին։ Կարմիր Վանքը եղել է գուտ Հայկական Հոգեւոր բարձրագոյն տիպի դպրոց։ Այնտեղ դասաւանդուել են Սուրբ Գրոց կենսութիւն, եկեղեցական հայրերի դրականութիւն, աստուածաբանութիւն, երաժշտութիւն, քերթողական արուեստ, փիլիսոփայութիւն եւ գրչութեան արուեստ։ մի խօսքով՝ ներքին եւ արտաքին գիտութիւններ։

Ներսէս ԾնորՀալին Կարմիր Վանքից յիշմանաւարտ լինելուց յետոյ, ինքնադրագոյնօր կատարելագործուած է՝ խորանալով աստուածաբանութեան, փիլիսոփայութեան, մատենագրութեան եւ եկեղեցական երաժշտութեան մէջ։ Նա կղել է նաեւ Յոյսիս յնորՀալի պայծառ գրիչ ու ծաղիկոյ։ Նրա կենսագիրը ասում է. «Գրէր եւ շարժագրութիւն գրոց Հրաշատեսակ եւ վայելուէ ի դանազան կերպս, որպէս աստուածային մատամբը շարահիւսեալ»։ Նա նոյնիսկ ծերութեան օրերին, իր ազատ ժամերին արտադրել է բազմաթիւ գրքեր. Լամբրոնացին այս մասին վկայում է եւ ասում։

«Ձեռաց Երկուք վաստակեցաւ,
Գիրս գրիլ միշտ ճգմեցաւ»։

Շնորհալիկն դեռեւս Կարմիր Վանքում ուսանող, կորցնում է իր հօրը: Ապիրատ իշխանը նետահար սպանւում է Պաշլաու-նիկների հայրական կալումած՝ Մովսէ Դղեակի պարիսպների տակ:

1112 թուականին Կարմիր Վանքում գու-մարուած պղգային-եկեղեցական մեծ ժո-ղովում, կաթողիկոս է ընտրւում քսան տա-րեկին Գրիգորը՝ Շնորհալու մեծ եղբայրը: Շնորհալին հաղիւ արքունիքի հասած, իր եղբոր ձեռքով ձեռնադրւում է քահանայ եւ ապա եպիսկոպոս ու դառնում եղբոր աջ րարուկը: 1116 թուականին հայրապետա-կան աթոռը Դուղրի Կարմիր Վա՛րէջ փո-խադրւում է Մովսէ, Հռոմիկայ: 1185 թուա-կանին Շնորհալին յաջորդւում է եղբորը որ-պէս Ամենայն Հայոց Կաթողիկոս: Վախ-ճա՛ւում է 1173 թուին:

Մեծ է Շնորհալու գրական փաստակը եւ բազմատեսակ: Նա բազմակողմանիօրէն դարգացած, բնատուր ձիրքերով օժտուած բանաստեղծ էր, երաժիշտ, մատենագիր, երախ: ու բարեբարգոյ:

Շատ հարուստ է նրա թողած գրական ժառանգութիւնը: Նա գրական ասպարէզ է իջել նախ որպէս բանաստեղծ եւ ամբողջ կեանքի ընթացքում էլ մնացել է միշտ բա-նաստեղծ: Նրա հոգեւոր բանաստեղծու-թիւններից շատերը գրուել են արեւական կարգով. օրինակ՝ «Աշխարհ Ամենայն», «Առաւօտ Լուսոյ», «Այսօր Անճառ» եւայլն: Նրա բանաստեղծութիւններից շատերն էլ «Ներսէսի քանոն» կամ «Ներսէսի յայն երգոյ» սկզբնատուերը ունեն. օրինակ՝ «Նայեաց Սիրով», «Նորահրաշ» եւ այլն:

Շնորհալու բնգհանուր երկերը հետեւ-եալ՝ են.

1. «Ատենաբանութիւն», արտասանւած իր կաթողիկոս ընտրութեան առիթով:
2. «Թուղթ Հիդհանրական». ու Շնորհալու արձակ գրուածքների մէջ պատմա-

կան-մատենագրական շատ մեծ արժէք է ներկայացնում:

3. «Թուղթեր», որոնք շատ արժէքաւոր են որպէս փաստաթղթեր Հայ եկեղեցու պատմութեան համար:

4. «Ողբ Եղեաթոյ»:

5. «Յիսուս Որդի»:

6. «Բանք Հաւատոյ»:

7. «Վիպասանութիւն»:

8. «Առակներ». «Հանելուկներ»:

9. «Որաւ Ուսումնականաց Մանկանց»:

10. «Յաղագս Երկնից եւ Զարդուց Նո-րա»:

11. Շարականներ, հոգեւոր երգեր, ու-ղօթքներ:

Շնորհալին մեր գրականութեան մէջ մի յոր տեսակ (ժանր) է մտցրել. «Առակք փասն ուրախութեան մարդկան»:

Զայնքաղ շարակնոցում Շնորհալուն են պատկա՛ւում հետեւեալ շարականները. «ԲԶ-փառ ձայնն Աւագ օրհնութեան, զօթանաս-նիցն, զնիծաւէացոցն», զԱղուհացից ամե-նայն Կիւրակէիցն, զՄարդկաբարդի հարցն, զՀոգւոյ Գալտեան, Զորս պատկերսն, ըզ-Վարդափառի գերկու պատկերսն, եւ զՓոխ-ման գերկու պատկերսն, զմարգարէից ԴԶ-հարցն, զՀերետակապետացն, զՆորահրաշն Վարդանայ, զՂեւոնդեանցն, եւ Այսօր ան-ճառ, զՆորդոցն, զԱստուած անդն, զԱ-րարչականն, զԱրեւագալի շարականն, զօրհնմք գեղն, զնայեաց սիրովն, եւ զի-քնն հայեցմքն, ըստ ոճանց՝ զսուրբ Յակո-բայն եւս սորոք է ասացեալ»:

Այսքան ստուար թուով շարականներ է գրել Շնորհալին եւ նրանց բոլորի էլ եղա-նականներ ինքն է յօրինել ու երգել:

Ղամուել Անցին այսպէս է բնու-թագրում նրա երաժշտական տաղանդը. «Եւ թէպէտ հրաշալիք էին բանք երգոց նորա առ միտն իմաստութեան, բայց առաւել գարմանայի էին արուեստը զանազան եղա-նականցն, զոր անման միմեանցն յօրինէր»:

2021ԱՊ ՍՐԿ. ՇԱՄԼԵԱՆ

(Երբ. 9)